ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 34

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2015 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջները՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել ավագանու 2015 թ. դեկտեմբերի 18-ի N 10 արտահերթ նիստի օրակարգը.

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնքի ավագանու՝ 2014 թ. դեկտեմբերի 18-ի N 46-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքային սեփականություն համարվող հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլատվություն տալու մասին
3. Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին
4. Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
5. Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնքում 2016 թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
6. Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնքի 2016 թ. բյուջեն հաստատելու մասին

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 35-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2014 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնքի ավագանու՝ 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնքի 2015 թ. բյուջեն հաստատելու մասին» N 46-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2015 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ

Ծրագիր	Հոդվածը	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախնական /հազար դրամ/	Փոփոխությունը +/-	Վերջնական /հազար դրամ/
1-6-1	4241	Մասնագիտական ծառայություններ	920.0	+50.0	970.0
2-2-1	4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	35.0	-25.0	10.0
2-5-1	4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	35.0	-25.0	10.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 36-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Նոր Արտամետի գյուղական համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է*** թույլատրել համայնքի ղեկավարին.

1. Համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աղյուսակ

Աճուրդ –վաճառք

Լոտ	Անվանումը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /հա/	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Գործառնական նշանակությունը	Մեկնարկային գին	Սահմանափակումներ
1.	Նոր Արտամետ	Նոր Արտամետ	0213-0014	1.8017	Գյուղատնտե-սական		Արոտավայր, Այլ հողատեսք	364850	
2.	Նոր Արտամետ	Նոր Արտամետ	0213-0015	1.5	Գյուղատնտե-սական		Արոտավայր, Այլ հողատեսք	303750	
3.	Նոր Արտամետ	Նոր Արտամետ	0213-0016	1.74461	Գյուղատնտե-սական		Այլ հողատեսք Արոտավայր	353290	
4.	Նոր Արտամետ	Նոր Արտամետ	0213-0017	1.75192	Գյուղատնտե-սական		Այլ հողատեսք Արոտավայր	354770	
5.	Նոր Արտամետ	Նոր Արտամետ	0213-0018	1.5	Գյուղատնտե-սական		Այլ հողատեսք Արոտավայր	303750	
6.	Նոր Արտամետ	Նոր Արտամետ	0213-0019	1.72476	Գյուղատնտե-սական		Այլ հողատեսք Արոտավայր	349270	
7.	Նոր Արտամետ	Նոր Արտամետ	0213-0020	1.7246	Գյուղատնտե-սական		Արոտավայր	349250	
8.	Նոր Արտամետ	Նոր Արտամետ	0213-0021	1.97257	Գյուղատնտե-սական		Այլ հողատեսք Արոտավայր	399450	
9.	Նոր Արտամետ	Նոր Արտամետ	0213-0022	1.27791	Գյուղատնտե-սական		Այլ հողատեսք Արոտավայր	258780	

Աշխատակազմի քարտուղար՝ _____ **/Ա. ԶԱՔԱՐՅԱՆ/**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 37

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանել Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի 62.06 տոկոսի չափով:
2. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 43 որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 38

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 44 որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թ. հունվարի 01-ից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
N 38 ՈՐՈՇՄԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների
թվաքանակը՝ 8

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորը	Դրույքը	Պաշտոնային դրույքաչափը
1	2	3	4	5	6	7	8
1	Գյուղապետարանի աշխատակազմ	Համայնքի ղեկավար	Քաղաքական		1	1	410453
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողական		1	1	145000
3		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	1	150000
4		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-1	1	1	145000
5		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	1	110000
6		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-2	1	1	110000
7		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-3	1	1	110000
8		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման		1	1	72752
	Ընդամենը				8		1253205

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 39-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների և ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջների՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնքում 2016 թվականի տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ ***7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.***
2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ***15000 /տասնհինգ հազար/ դրամ.***

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ***25000 /քսանհինգ հազար/ դրամ.***

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ***25000 /քսանհինգ հազար/ դրամ.***

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ***50000 /հիսուն հազար/ դրամ.***

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ***1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,***
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ***2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.***

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
   1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ***1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.***
   2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ

թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ***2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.***

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
   1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ***3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.***
   2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ***3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.***

5. Համայնքի տարածքում՝
   1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար ***200 /երկու հարյուր/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար***.
   2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ***150000 /հարյուր հիսուն հազար/ դրամ.***
   3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ***30000 /երեսուն հազար/ դրամ***.

   ա. համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

   հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ ***3000 /երեք հազար/ դրամ.***

   ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ ***500 /հինգ հարյուր/ դրամ.***

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար ***50000 /հիսուն հազար/ դրամ.***

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
   1) առևտրի օբյեկտների համար՝ ***30000 /երեսուն հազար/ դրամ.***

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ***60000 /վաթսուն հազար/ դրամ.***
3) բաղնիքների (սաունաների) համար՝ ***300000 /երեք հարյուր հազար/ դրամ.***
4) խաղատների կազմակերպման համար՝ ***700000 /յոթ հարյուր հազար/ դրամ.***
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ ***300000 /երեք հարյուր հազար/ դրամ.***
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ ***120000/մեկ հարյուր քսան հազար/ դրամ.***

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
   1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ***2000 /երկու հազար/ դրամ.***
   2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ***3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.***
   3) այլ արտաքին գովազդի համար՝ ***1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.***
   4) դատարկ գովազդային վահանակների համար՝ ***700 /յոթ հարյուր/ դրամ.***
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ***2000 /երկու հազար/ դրամ.***
   1) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **50000 /հիսուն հազար/ դրամ.**
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ***10000 /տասը հազար/ դրամ.***

11. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ***100000 /մեկ հարյուր հազար/ դրամ.***
12. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար)
   1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ ***2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.***
   2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ ***5000000 /հինգ միլիոն/ դրամ.***
   3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ ***7000000 /յոթ միլիոն/ դրամ.***
   4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար ՝ ***10000000 /տասը միլիոն/ դրամ.***
13. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000 /երկու հազար/ դրամ.**
14. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական

ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.**

15. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ ***5000 /հինգ հազար/ դրամ.***
16. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝
    1) Հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ **ամսական 100 /մեկ հարյուր/ դրամ.**
17. Շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար՝ ***1000 /մեկ հազար/ դրամ***:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի գյուղական համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 40-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել համայնքի 2016 թ. բյուջեն՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ